

**ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝  
ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ-ՄԵՐՁՐԱԼԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻՆ**

Հոկտեմբերի 26—28-ը ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբելյանի անվան գրականության ինստիտուտի նիստերի դահլիճում տեղի ունեցավ համամիութենական գիտական նստաշրջան՝ նվիրված Հայ-մերձրալթյան գրական կապերին։ Նստաշրջանի աշխատանքներին մասնակցում էին էստոնիայի, լիտվայի, լատվիայի և Հայաստանի այն գրականագետները, որոնք զբաղվում են հայ և մերձրալթյան գրականության մասնալականացման հարցերով։ Ներածական խոսքով նրանք նստաշրջանը բացեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, Մ. Աբելյանի անվան գրականության ինստիտուտի դիրեկտոր էդ. Զրբաշյանը։ Այսօր, ասաց նա, մենք սկսում ենք Լեռնայի համամիութենական գիտական նստաշրջանը, որը նվիրված է Հայաստանի և մերձրալթյան Լեռնայի հանրապետությունների գրական կապերին։ Թեպետ Հայաստանը և Մերձրալթիան բավական հեռու են իրարից, սակայն նրանց միջև կան սերտ կապեր, որոնք սկզբնավորվել են դեռևս 19-րդ դարի սկզբից։ Այդ կապերն ալիքի են ամբաստանվել վերջին տասնամյակներին։ Այսպես, վերջիններս հայերի և էստոնացիների միջև Լեռնայի միջուկները ի սկզբանե, Հայտնի է, թե ժամանակին որքան խոշոր դեր է ունեցել ուսումնական մի այնպիսի հաստատություն, ինչպիսին Դորպատի՝ Տարտուի համալսարանն է։ Այստեղ կրթվել ու դաստիարակվել են հայ ժողովրդի պանծալի զավակները՝ հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Ն. Արմյանը, հրապարակախոս, մանկավարժ ու լուսավորիչ Ս. Նազարյանը, բանաստեղծ, արձակագիր, հասարակական գործիչ Ռ. Պատկանյանը, բանաստեղծ ու մանկավարժ Գ. Դոդոյանը։ Այժմ ևս այդ կապերը շարունակվում են։ Լատվիայի, նրա առաջադեմ զավակների հետ եղել են բազմաթիվ կապեր։ Լատվիայի մեծ բանաստեղծ, դրամատուրգ և հասարակական գործիչ Յան Ռայնիսի անշափ հուզել են հայ ժողովրդի ճակատագիրն ու մշակույթը, որոնց հետ նա ծանոթացել է 19-րդ դարի վերջին և 20-րդի սկզբին։ Դրա արդյունքներն էլ մեզը եղել է Ամենադժբախտ ժողովուրդը և Լեհիերը՝ ակնարկել Մեր օրերում կապերն ալիքի են ընդարձակվել լիտվայի հետ։ Լիտվացի հանճարեղ բանաստեղծ է. Մեծելայտիսը ակնածանքով ու խոր հարգանքով է խոսել ու քրել հայ ժողովրդի, նրա բազմադարյան մշա-

կույթի մասին։ Այս առումով հատկանշական է հատկապես նրա «Հայաստան» խորագրով բանաստեղծությունների շարքը, ինչպես տևանում ենք, ասաց էդ. Զրբաշյանը, հայ-մերձրալթյան գրական առնչություններում կա ուսումնասիրման և իմաստավորման մեծածավալ նյութ։ Այնուհետև նա ողջունեց հյուրերին և հույս հայտնեց, որ նստաշրջանը նոր խթան կդառնա հայ-մերձրալթյան գրական կապերի ուսումնասիրման գործում։

Նստաշրջանի առաջին նիստը նախագահում էր լատվիական ՍՍՀ ԳԱ Ա. Ուպիտի անվան լեզվի ու գրականության ինստիտուտի ՍՍՀՄ ժողովուրդների գրականության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Վալեհեն։ «Հայ գրականությունը և լիտվացի ընթերցողը թեմայով հետաքրքիր, բովանդակալից, միաժամանակ տխուր մտորումներ առաջացնող զեկուցում կարդաց Ռ. Յանաուսկայտեն (Վիլնյուս)։ Վիլնյուսի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողներին տրված հարցերի պատասխանների վերլուծության հիման վրա զեկուցողը ներկայացրեց ՍՍՀՄ ժողովուրդների գրականության և մասնավորապես հայ գրականության նկատմամբ ուսանողների հետաքրքրության անկման պատճառները։ Նա նշեց մի շարք հանգամանքներ, որ խորթացրել են լիտվացի ընթերցողին հայկական գրքերից։ Դրանք են՝ ՍՍՀՄ ժողովուրդների գրականության դասավանդման ձևական լինելը, լիտվերենով հայ գրողների ըստեղծագործությունների հրատարակությունների կրկնակի կրճատվելը, գրադարաններում գրքերի դասավորության ու տեղադրության առկա թերի համակարգը, որը չի նպաստում ՍՍՀՄ ժողովուրդների գրականության պրոպագանդմանը, նաև՝ հայ մշակույթի գործիչների հետ անմիջական կապերի ու շփումների բացակայությունը։

«Հայկական պոեզիան լատվիայում 60—80-ական թվականներին ուշագրավ զեկուցումով հանդես եկավ Վ. Վեցգրավիսը (Ռիգա)։ Հայկական պոեզիայից լատվերեն կանոնավոր լարգամանությունների կատարումը սկսվել է 60-ական թվականների երկրորդ կեսից։ Այդ ժամանակ է, ասաց նա, որ ստեղծագործական կապեր են հաստատվում լատիշ բանաստեղծ Մ. Չակլայսի և հայ բանաստեղծներ Պ. Սևակի, Գ.

Էմինի, Ա. Ավագյանի, Հ. Էդույանի, Դ. Հովհան-  
նեսի և ուրիշների միջև: 1968 թ. Ռիգայում  
հրատարակվել է Պ. Սեակի «Զեռքեր» խորա-  
գրով ժողովածուն: Մ. Զակլայսից բացի,  
Հայ-բանաստեղծների ստեղծագործություններից  
թարգմանություններ են կատարել և այժմ էլ  
կատարում են Ի. Զիերոնիսը, Մ. Միսիկյան, Օ.  
Լիսովսկան, Յա. Պիտերսը, Ա. Բերգմանիսը,  
Յա. Սիրմարգիսը և այլք: Նրանց համատեղ  
աշխատանքի արդյունքն է 1974 թ. հրատարակ-  
ված հետպատերազմյան Հայ քնարերգությանը  
նվիրված «Քո հողը սուրբ» անթոլոգիան, որտեղ  
ներկայացված են 16 Հայ բանաստեղծ: Հայ  
դասականների ստեղծագործություններից տպա-  
գրվել են Ավ. Իսահակյանի հատընտիրը՝ «Հայ-  
րենիքի ծուխը» վերնագրով, պարբերականնե-  
րում բազմիցս հրատարակվել են Սայաթ-Նո-  
վայի, Սիմեոնի, Ե. Զարենցի, Վ. Տերյանի  
բանաստեղծությունները: 1983 թ. հրատարակ-  
վել է Գ. Էմինի «Կենացներ և խաչքարեր» բա-  
նաստեղծությունների ժողովածուն: Հայկական  
պոեզիայից լատիշերեն կատարված թարգմանու-  
թյունների քանակը լիովական, ռուսական, էս-  
տոնական քնարերգությունից կատարված թարգ-  
մանություններից հետո գրավում է չորրորդ  
տեղը: Զեկուցման վերջում Վ. Վեգգրավիսը նը-  
շեց, որ լատիշական քննադատությունը և լա-  
տիշ ռեժիսորները Հայկական պոեզիայում իրենց  
առավել մոտ են համարում հայրենասիրական  
թեմատիկան, նաև՝ տոկոնության, անկոնու-  
թյան և կարեկցության մոտիվները:

Ռեճական որոնումների տիպաբանությունը  
ժամանակակից Հայ և լիտվական արձակույժ  
վերնագրով բովանդակալից զեկուցում կարդաց  
Ն. Ալեքսանդր: Հայ և լիտվական գյուղական  
արձակել մոտ են համարում հայրենասիրական  
նա, հատկանշական ընդհանրություններ են  
հայտնաբերվում դրանց զեղարվեստական հա-  
մակարգերում և աշխարհայնական մեշ: Այդ  
ստեղծագործություններում մարդը և հողը  
պրոբլեմը լուսարանվում է որպես գյուղական  
կյանքի կոնկրետ արտահայտություն, և որպես  
աշխարհում մարդու բարոյական վիճակի պրոբ-  
լեմ: Գյուղացու օտարումը հողից, հողի հետ նրա  
դարավոր կապի խզումը իրենց հետ բերում են  
նաև բարոյական հիմքերի կորուստ և հայրենի-  
քի ու մարդկայնության հետ արժատական կա-  
պերի անջրպետում: Մաթևոսյանի և Գրանաուս-  
կասի ստեղծագործությունների վերլուծության  
հիման վրա ցույց տրվեց այդ կարևոր պրոբ-  
լեմների զեղարվեստական նմանօրինակ ըն-  
թերցման ընդհանրություններ, որ ի մի են բերում  
և մոտ, և տարբեր ոճական լուծումներ՝ դրանով  
իսկ վկայելով Հայկական ու լիտվական գրակա-

նությունների զարգացման զեղարվեստակա- ու-  
հիների տիպաբանական նմանություններն ու-  
ինքնատիպությունը:

«Էստոնա-Հայկական գրական կապերի պատ-  
մությունից» թեմայով Էլույթ ունեցավ Ս.  
Նալկավը (Տարտու): Հայ գրականության հետ  
էստոնացիների ծանոթությունը, ասաց նա,  
սկսվել է 19-րդ դարում: Այդ ծանոթությունը  
նախապես կատարվել է գերմանական աղբյուր-  
ներից: Հայ գրականությունից էստոներեն ա-  
ռաչին թարգմանությունը կատարվել է անցյալ  
դարավերջին. դա Բաֆու «Հալալեդդին» է՝  
Է. Վիմգի թարգմանությամբ: 20-րդ դար-  
սկզբին էստոնիայում ամենից ճանաչված Հայ  
գրողները Ա. Ահարոնյանն ու Վ. Փափազյանն  
էին: Այնուհետև զեկուցողը նշեց, որ էստոնիա-  
յում սովետական կարգերի հաստատումից հե-  
տո Հայ գրականության նկատմամբ հետաքր-  
քորությունը գնալով մեծացել է: Այսպես,  
1940—1987 թթ. էստոներեն թարգմանվել են  
130 Հայ գրողի մոտ 600 ստեղծագործություն,  
այդ թվում 36 գիրք (Խ. Աբովյանի «Վերք Հա-  
յաստանին», Բաֆու «Սամվելը», Շիրվանզա-  
դի «Քառսը», Ավ. Իսահակյանի, Հ. Մաթևոս-  
յանի, Գ. Էմինի, Վ. Պետրոսյանի, Պ. Զեյ-  
թունյանի, Վ. Գրիգորյանի, Կ. Սիմոնյանի և  
այլոց գրքերը): էստոնացի գրողներից շատերը  
Լեդլ են Հայաստանում և իրենց տպավորու-  
թյունները ներկայացրել զեղարվեստական ստեղ-  
ծագործություններում (Ա. Կասի «Առաջին ան-  
գամ Հայաստանում» գիրքը, Ա. Կասկեպսի  
«Հայաստան» բանաստեղծությունների շարքը):

Նստաշրջանի երկրորդ նիստը նախագահում  
էր թարգմանչուհի Ռ. Յանաուսկայան: «19-րդ  
դարավերջին և 20-րդ դարասկզբին լատիշական  
Հայկական գրական կապերի մասին» վերնա-  
գրով ուշագրավ զեկուցում կարդաց Վ. Վալե-  
ռեն (Ռիգա), Գրականությունը, հատկապես  
դասական, առավել լավ է օգնում ժողովուրդնե-  
րի փոխըմբռնմանը, մասնավորապես ասաց նա:  
Չնայած մեր գրականությունների զարգացման  
մեշ ընդհանուր շատ գծեր կան, բայց մենք  
վատ գիտենք այդ գրականությունները: Հայ  
գրականությունը լատիշերեն սկսել է թարգման-  
վել 19-րդ դարի վերջին: Առաջին ստեղծագոր-  
ծությունը, որին ծանոթացել են լատիշները,  
Բաֆու գործերից մեկն է, իսկ առաջին  
թարգմանիչը՝ Է. Բիրգենիկ-Ուպիտիսը, հետա-  
գայում լատվիայի ժողովրդական գրողը: 20-րդ  
դարի սկզբին ամենից շատ թարգմանվել են  
Բաֆու, Վ. Փափազյանի, Ա. Ահարոնյանի  
ստեղծագործությունները: Վ. Վալեռեն նշեց, որ  
թվարկված գրողների երկերում արծարծված  
հարցերը, թեմաները՝ մտահոգությունը, ցավը,  
Հայաստանի և նրա ժողովրդի բախտի նկատ-

մամբ, օտար լծի բազում ծանր հետևանքները, առաջ էին լատիշներին, որոնք նույնպես յոթ դար գտնվել են գերմանական լծի տակ՝ շունենալով ազգային մշակույթը զարգացնելու ոչ մի հնարավորություն։ Հայ ժողովրդի ցավն ու տառապանքը ամենից ավելի խորն է արտահայտել Յան Ռայնիսը՝ Հայաստանին նվիրված «Ամենադժբախտ ժողովուրդը և երկիրը» ակնարկում։ Այնուհետև ղեկուցողն ասաց, որ Բաֆֆու, Վ. Փափաղյանի, Ա. Զոպանյանի, Ա. Ահարոնյանի, Խաչատուրյանի, որոնք թարգմանվել են (ատվիայում 20-րդ դարի սկզբին, ընկել են պարարտ հողի Այդ տարիներին լատիշական գրականության այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Յան Ռայնիսը, Կ. Սկալբեն, Յա. Ակուրատերը և ուրիշներ, արձագանքել են ողբերգական այն իրադարձություններին, որոնք առնչվում են լատիշ ժողովրդի ճակատագրի հետ, երբ ցարական ինքնակալության պատժիչ շղկատները, 1905—1907 թթ. հեղափոխությունից հետո, գերմանական կալվածատերերի հետ կրակի էին մատնում գյուղացիների տները, տանջում և զնդակահարում էին մարդկանց այն բանի համար, որ վերջիններս համարձակվել էին դուրս գալ հարստահարողների դեմ։ Վերջում Վ. Վալբերեն ասաց, որ լատիշ-հայկական գրական կապերի ուսումնասիրությունը պետք է շարունակվի, քանի որ այդ գրականությունների զարգացման պատմությունը, ունենալով ընդհանուր հիմքեր (մի կողմից դրանք զարգացել են 19-րդ դարի ուսական ուսմանական մշակույթի և գրականության հետ սերտ կապի մեջ, մյուս կողմից՝ ժամանակի համաեվրոպական և համաշխարհային գրական հոսանքների ընթացքի մեջ), չեն կորցրել իրենց խորքային կապը բանահյուսության, ազգային ավանդությունների հետ, ունեն ինքնատիպ գծեր և օրինաչափություններ։

Վերջ Հայաստանին և Վ. Պետրիսի «Արգիմանտար» (պատմատիպարանական բնագիտություններ) թեմայով ղեկուցում կարգաց Յու. Լաուրաշյանը (Վիլնյուս)։

Ա. Նոյնգալյանի ղեկուցման վերնագրերն էր «Գրականության զարգացման առանձնահատկությունների հարցի շուրջ»։ Մեզանում գրեթե չլրական տեսական լուրջ հետազոտություններ ղեկավարված մշակույթի ազգային ինքնատիպության մասին, ասաց նա։ Այս պակասը կապված է հասարակական գիտությունների հետ մնալու հետ։ Ժողովուրդների բարեկամության, ինտերնացիոնալիզմի բարձր ըմբռնումները դարձան ազգային ձգտումների ճնշման միջոց։ Հատկապես 30-ական թվականներին սկսեցին համահարթել ՍՍՀՄ-ի մեջ միավորված ժողովուրդների ազգային առանձնահատկությունները։ Դա պարզ երևում է, մանավանդ, պատմական

գիտության մեջ։ Սոցիալական զարգացման փուլերի տեսությունը գրեթե մեխանիկորեն կիրառվում էր տարբեր ազգությունների նկատմամբ, որոնք գտնվում էին զարգացման տարբեր մակարդակների վրա։ Դա աղքատացնում էր պատմությունը։ Բայց առանց դրա անհնար է հասկանալ ազգային մշակույթը։ Հատ Ա. Նոյնգալյանի, տասնամյակներ շարունակ արհամարհանքով է խոսվել կրոնի և կրոնական գիտակցության մասին։ Բայց առանց այդ գիտակցության դերը հաշվի առնելու անհնար է ճիշտ գնահատել ոչ միայն նարեկացու պոեմը, այլև ազգային էպոսը և միջնադարյան ողջ գրականությունը, նաև այսօրվա գրականության բազմաթիվ Լրևույթներ։

«Ծագումնաբանական կապերի ուսումնասիրություն» Լրևու տեսանկյուն հայ և լիտվական գրականություններում (Ա. Միցկևիչ և Յու. Սլովակի) թեմայով հանդես եկավ Բ. Բալսեդյանը։ 19-րդ դարում լեհացած շատ հայեր ու լիտվացիներ միայն խոստովանել են իրենց ազգային ծագումը, ասաց նա։ Դրա վերջերից սկսած ասիմիլացված լիտվացի և հայ գրողների (օրինակ՝ Ա. Միցկևիչի և Յու. Սլովակի) ծագումնաբանության խնդրով զբաղվել են բազմաթիվ գիտնականներ և տարբեր մոտեցումներ ցուցաբերել այդ կարևոր հարցին։ Քրենագատարար անդրադառնալով այդ մոտեցումներին, Բ. Բալսեդյանն ասաց, որ Սլովակիին էր «Արքա-Ոգի» միստիկական պոեմում, ինքը՝ հեղինակը, մարմնավորում գտնելով գլխավոր հերոս Ջեր Արմենյիկի կերպարում, և Հայաստանը համարելով սլավոնական ոգու հայրենիքը, փաստորեն այդ ամենով իսկ բանաստեղծական կապ է ստեղծել լեհաստանի և իր պապերի հայրենիքի՝ Հայաստանի միջև։ Դա էլ հենց ղեկուցողը համարեց հայկական ծագման իր իսկ՝ Սլովակիու խոստովանությունը։

Նստաշրջանի Լրբորդ նիստը նախագահում էր Մ. Արեղյանի անվան գրականության ինքնատիպ գրական կապերի բաժնի վարիչ, Դանասիրական գիտությունների դոկտոր Ս. Ալեքսանյանը։ «Ա. Վենցլուան և հայ բանաստեղծները» թեմայով ղեկուցում կարդաց Ղ. Այվազյանը։ Լիտվա-հայկական մշակութային և գրական առնչությունները սկսվել են 19-րդ դարի կեսերին, երբ 1847 թ. Վալանասա ամսագրում տպագրվեց Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը»՝ նշանավոր բանաստեղծ Մ. Շիլլինգս-Շիլլենիկի թարգմանությամբ։ Նախահեղափոխական ողջ ժամանակաշրջանում հայկական պոեզիայից կատարվել են զանազան թարգմանություններ, գրվել են ընդհանրացնող հոդվածներ, ասաց նա։ Այդ թարգմանությունների շարքում հատկանշական են ուսու և լիտվացի նշա-

նախորդ բանաստեղծ Յու. Բալտրուշայտիսի կատարած թարգմանությունները Ա. Մատուրյանի ստեղծագործություններից, որոնք իրենց արժանի տեղը գրավեցին «Հայաստանի պոեզիա» հանրահայտ անթոլոգիայում: Լիտվա-հայկական գրական կապերը նոր թափ ու ավելի խոր ընթացակալություն ստացան Սովետական Միության կազմում Լիտվայի ընդգրկումով: Այդ գործում իր ավանդն ունի անվանի բանաստեղծ Անտանաս Վենցյովան, որն առաջիններից մեկն էր, որ Լիտվայում սկսեց ակտիվորեն պրոպագանդել հայ պոեզիան: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ հայ բանաստեղծների հեռ Ա. Վենցյովայի փոխհարաբերություններին: Նշեց, որ այդ առումով հատկանշական է 1955 թվականը, երբ նա եղավ Հայաստանում, շփվեց իր հայ գրչակիցների հետ և զեկուցողն Ա. Վենցյովան արդեն ճանաչված բանաստեղծ էր: 1947 թ. «Սովետական գրականություն» ամսագրի զեկուսմբերյան համարում տպագրվել էր նրա «Եկանքում ոչինչ ավելի չեմ ցանկացել» բանաստեղծությունը՝ Ա. Գրաշու թարգմանությամբ, մեկ տարի անց նույնի թարգմանությունում հրատարակվել է Վենցյովայի «Բանաստեղծ է Հայրենիք» բերթվածը: 1953 թ. լույս էր տեսել նրա բանաստեղծությունների գիրքը, որոնցից 29-ր թարգմանել էր Պ. Սեակը: Այդ ժամանակներից սկսած Վենցյովան դարձել է ամենից ավելի հաճախակի հայերեն թարգմանվող լիտվացի բանաստեղծը: Վերջում Ղ. Այվազյանն ասաց, որ հատկանշական են և լիտվացի բանաստեղծի մտերմությունը Խաչակյանի, Գրաշու, Սեակի հետ, նրանց նամակագրական կապերը: Դրանցում ամփոփված են Վենցյովայի գեահատկանքները հայ պոեզիայի մասին և որոշակի հետաքրքրություն են ներկայացնում լիտվա-հայկական գրական կապերի առումով:

«Ընդհանուրը և տարբերակիչը լատիշական ու հայկական տաղաչափական արվեստում: Հարցի դրվածքի շուրջ» թեմայով զեկուցում կարդաց Յա. Կուսիսե (Ռիգա): Ա. Գրիգորյանի «Մարցինկյավիլուսի պոետիկայի ուսումնասիրության փորձ» զեկուցումը ներկայացրեց Ա. Հովակիմյանը:

«Հայ-լատիշական գրական կապերը 40—50-ական թվականներին» զեկուցումով հանդես եկավ Ա. Արամյանը: 40—50-ական թվականներին հայ-լատիշական գրական կապերը, ասաց նա, կանխորոշվեցին ՍՍՀՄ ժողովուրդների պատմական և մշակութային զարգացման ընդհանրություններով: Այդ կապերի ակունքների մոտ կանգնած է լատիշ մեծ Բանաստեղծ Յան Ռայնիսը, որը դեռևս բուրժուական կառավարում լատիշ հասարակայնությանը ծանոթացրել է հայ ժողովուրդին: 10—7

գովորդի պատմական ճակատագրին և նրա գրականությունը: Հետպատերազմյան առաջին իսկ տարիներին դրվում են երկու հանրապետությունների գրական գործիչների ստեղծագործական և անձնական փոխշփումների հիմքերը: Յա. Սուդրակալնի, Մ. Կեմպի, Ս. Կապուտիկյանի, Ն. Զարյանի, Ս. Տաբոցու, Գ. Էմիլի և այլոց ստեղծագործությունների մեջ վառ արտահայտություն գտավ «միասնական տան զգացում»-ը, որը և միավորում էր եղբայրական հանրապետությունների գրողներին: Մեր ժողովուրդների մերձեցմանը, այնուհետև ասաց զեկուցողը, նպաստել են և փոխադարձ թարգմանությունները, որոնք օգնում էին ավելի ամբողջական և խոր զգալ հայ ու լատիշ բանաստեղծների ազգային ինքնատիպությունը: 1955 թ. Երևանում լույս տեսավ «Բալթիկայի ափին» ժողովածուն, որտեղ ներկայացված էին լատիշ նշանավոր գրողների պատմվածքներն ու բանաստեղծությունները: 1957 թ. հրատարակվեց Ռայնիսի «Ընտիր երկերը»: Խնդրո առարկա ժամանակաշրջանում, ըստ զեկուցողի, հայ-լատիշական գրական կապերի գլխավոր միտումը եղել է եղբայրական երկու ժողովուրդների գրականությունների հետ փոխադարձ ծանոթությունը: Մեր գրականությունների մերձեցման առաջին քայլերը, փոխհարստացման պրոցեսի առավել խորացումը պարարտ հող ստեղծեցին հետագա, էլ ավելի բեղմնավոր փոխազդեցության համար:

Ուշագրավ հաղորդումներով հանդես եկան Գ. Հակոբյանը («Պ. Սեակ և է. Մեծելայտիս») և է. Սաղաթյանը («Մերձբալթյան գրականությունը հայերեն լեզվով»):

Ջեկուցումների ավարտից հետո տեղի ունեցավ դրանց քննարկումը, որին մասնակցեցին Ս. Ալեքսանյանը և Վ. Վալդեբե: Նշեց, որ նստաշրջանի աշխատանքները անցան կազմակերպված ու քարձր մակարդակով, զեկուցումները դուրս եկան ակադեմիական նեղ շրջանակներից, դրանց վրա մեծապես զգացվեց վերակառուցման սթափեցնող շունչը: Նստաշրջանի նշանակությունը շատ մեծ է, բանի որ սա առաջին հանդիպումն էր, որտեղ երես առ երես, առանց միջնորդի, խոսվեց մեր պատմական, մշակութային կապերի մասին, նշվեց այն, ինչ գիտենք և ինչ չգիտենք, ինչն է մեղ մերձեցումում, հուզում, ինչով ենք նման և ինչով տարբեր: Շեշտվեց, որ առանց փոխադարձ ճանաչման չի կարող լինել ժողովուրդների իսկական բարեկամություն: Ժիշտ է, ներկայումս սովետական ժողովուրդների գրականությունը հիմնականում զարգանում է ազգային առանձնահատկությունների հաշվառման հողի վրա, բայց միաժամանակ խորանում են ազգամիջյան կա-

պերը: Առանձնապես ընդգծվեց, որ այսուհետև պետք է աշխատել թարգմանություններ անել հենց բնագրից, թարգմանելիս ընտրություն կատարել, որպեսզի ճիշտ ներկայացվի, թե ինչով է ապրում, շնչում տվյալ ժողովուրդը, որը և ըստ էության ավելի կնպաստի ժողովուրդների հոգևոր իրական փոխհարստացմանը: Վ. Վավերեն մերձբալթյան իր գործընկերների անունից շնորհակալություն հայտնեց չեխ ընդունելության և նստաշրջանի աշխատանքները բարձր կազմակերպվածությամբ անցկացնելու համար: Նա ասաց, որ թեպետ աշխարհագրական դիրքով Հայաստանը և Մերձբալթիկան բավական հեռու են, սակայն վերջին շրջանում կատարվող հայտնի իրադարձությունները առավել սերտորեն մերձեցրին նրանց ժողովուրդներին:

Վերջում նստաշրջանի արդյունքներն ամփոփեց ակադեմիկոս էդ. Յրբալանը: Նա մասնավորապես ասաց, որ նստաշրջանի գումարումը

մի քանի անգամ հետաձգվել է, որի պատճառը հանրապետության ներքին իրավիճակն էր: Ումանք ասում էին, որ այս պայմաններում իմաստ չունի կազմակերպել նստաշրջան: Սակայն, մեր կարծիքով, շարունակեց էդ. Ջրբալանը, հենց միայն բարոյական աշակցություն ցույց տալու, մեր ժողովուրդների այսօրվա կյանքը ճիշտ ըմբռնելու համար այն պետք էր անհապաղ հրավիրել: Եվ այդ առումով մեր սպասելիքները իրականացան: Նստաշրջանը ոչ թե սոսկ հերթական միջոցառում էր, ասաց նա, այլ երբայրական ժողովուրդների մտավորականների հանդիպում՝ հայ ժողովրդի արդար պահանջը՝ հոգեպես, և՛ քաղաքականապես սատարելու համար: Մենք հաստատապես համոզվեցինք, որ մերձբալթյան ժողովուրդների մտավորականները մեզ հետ են:

Ա. Հ. ԶԱՔԱՐՅԱՆ

#### ՀՍՍՀ ԳԱ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱԺԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Ս/Ք հոկտեմբերի 24—25-ը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ օբյեկտառաջայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի գիտական նստաշրջանը: Այն ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Կ. Լ. Դավաթյանը:

Պատմական գիտությունների թեկնածու Հ. Հ. Մառութչյանը զեկուցումը նվիրված էր երկրի պատմականության, պետական և վարչական մարմիններում լիբանանահայերի ներկայացուցչությանը: Զեկուցման մեջ նշվեց, որ, ելնելով համայնքների ինքնավարության սկզբունքներից, Լիբանանում յուրաքանչյուր համայնքի ներքին կառավարումը և երկրի ղեկավար մարմիններում բաշխման կարգը սահմանվում են ըստ կրթական հատկանիշի: 1929 թ. ի վեր հայերը մասնակցություն ունեն Լիբանանի պառլամենտական ընտրություններում: 1960 թ. մինչև 1972 թ. և 1975—1976 թթ. քաղաքացիական պատերազմը նախորդող ընտրություններում հայ համայնքից երկրի պառլամենտում ընտրվել է 5-ական պատգամավոր: 1957 թ. մինչև 1975—1976 թթ. քաղաքացիական պատերազմը հայերը Լիբանանի պառլամենտում ունեին մեկ փոխնախագահ, իսկ մինիստրների թվում՝ երկու ներկայացուցիչ: Այս իրողությունն աննախադաս է ներկա սփյուռքում:

Պատմական գիտությունների թեկնածու Հ. Լ. Փանկեանյանի «Իրանա-իրաքյան պատերազմը և հայերը» զեկուցման մեջ ցույց տրվեց, որ 1978—1979 թթ. Իրանում տեղի ունեցած հեղափոխությունը ժողովրդի սոցիալ-տնտեսական էլանըրում և ոչ մի էական փոփոխություն չբերեց, սակայն ազգային փոքրամասնությունների շարժումը զգալիորեն ուժեղացավ՝ հանգեցնելով ներքաղաքական իրադրության որոշ սրմանը: 1980 թ. սեպտեմբերին սկսված իրանա-իրաքյան պատերազմը ժամանակավորապես հետին պլան մղեց ազգային փոքրամասնությունների ինքնավարության հարցերը և նախնական շրջանում նպաստեց ազգային միասնության հարաբերական ամրապնդմանը: Հայերն Իրանի մյուս ազգային փոքրամասնությունների նման զեկն էին այդ պատերազմին: Սակայն համայնքի գոյությունը պահպանելու նպատակով նրանք պատրաստակամություն հայտնեցին մասնակցելու այդ պատերազմին: Իրանի բոլոր հայաշատ վայրերում ստեղծվեցին պատերազմի օգնության կոմիտեներ: Ուղղամտակառու էին մեծ թվով հայ ռազմիկներ, որոնցից շատերը զոհվեցին (բժիշկներ, բուժակներ, միսանիկներ, վարորդներ և այլ մասնագետներ): Իրանա-իրաքյան պատերազմը Իրանի աշխատավորության, այդ թվում նաև հայերի տնտեսական վիճակը խիստ վատթարացրեց: Դրա հետևանքով իրանահայությունը քանակը սկսեց նվազել: Ապրուստ հայաց